# ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

***Դեկտեմբերի 1-ին, շաբաթ.- Տոն Սրբոց Առաքելոցն եւ առաջին լուսաւորչացն մերոց Թադէոսի եւ Բարդուղիմէոսի:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թադեոս վրդ. Ջիրեկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Դուք էք լոյս աշխարհի» (Մատթ. Ե 14) բնաբանով քարոզ խոսեց:

***Դեկտեմբերի 2-ին, կիրակի. - Բ. կիրակի Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Աշոտ աբղ. Մնացականյանը: «Հայր մեր»-ից առաջ Տ. Շահե արքեպս. Աճեմյանը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

***Դեկտեմբերի 8-ին, շաբաթ.- Սրբոյն Նիկողայոսի Զմիւռնացւոյ Սքանչելագործ Հայրապետին:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Մամբրե աբղ. Տաշչյանը:

***Դեկտեմբերի 9-ին, կիրակի.- Գ. կիրակի Յիսնակաց: Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Գեղարդ աբղ. Վահունին: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը հավուր պատշաճի քարոզ խոսեց:

***Դեկտեմբերի 16-ին, կիրակի.- Դ. կիրակի Յիսնակաց:***

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Թորգոմ աբղ. Տոնիկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Տէր աւելացո զհաւատս մեր» (տե՛ս Ղուկ. ԺԷ 5) բնաբանով քարոզ խոսեց:

*Դեկտեմբերի 23-ին, կիրակի.- Ե. կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովհաննես աբղ. Մայիլյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Առ զլուծ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, զի լուծ նորա քաղցր է, եւ բեռն նորա փոքրոգի» (Ձեռնադրության Մաշտոց) բնաբանով քարոզ խոսեց (տե՛ս էջ 41):

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*Դեկտեմբերի 30-ին, կիրակի.- Զ. կիրակի Յիսնակաց:*

Այսօր Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, Ս. Պատարագ մատուցեց Տ. Հովակիմ աբղ. Մանուկյանը: «Հայր մեր»-ից առաջ պատարագիչ Հայր Սուրբը «Մի՛ մերձենար այսր. լոյծ զկօշիկս քոյ յոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է» (Ելից Գ 5) բնաբանով քարոզ խոսեց:

Ս. Պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը: